



**ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

www.mlri.org.am

**ՀՕԲԿ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՁԵԿՈՒՅՑ**

ԵՐԵՎԱՆ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄ	1
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
1. ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ	3
1.1. «ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»	3
1.2. «ՆԱԽԱԳԻԾ» ԵՎ «ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»	4
1.3. «ԼԵՌՆԱՀԱՏԿԱՑՄԱՆ ԱԿՏ»	6
1.4. «ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ»	8
2. «ԿՈՆՍԵՐՎԱՑՈՒՄ» ԵՎ «ՍԱՌԵՑՈՒՄ»	8
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ	9
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ	10

1. ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը ձևավորվում է չորս փաստաթղթերի ամբողջությամբ՝

- ա.** Օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ),
- բ.** Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն (այսուհետ՝ Թույլտվություն),
- գ.** Օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր),
- դ.** Լեռնահատկացման ակտ:

1.1. «ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

Թույլտվությունն ըստ էության հանդիսանում է վարչական ակտ, իսկ Պայմանագրով ձևավորում են քաղաքացիաիրավական հարաբերություններ՝ օգտակար հանածոյի սեփականատիրոջ ու օգտագործողի միջև և հետևաբար այն չի կարող հանդիսանալ վարչական ակտ:

Այս պարագայում՝

- ա.** դատական վեճի դեպքում տեսականորեն կարող է առաջանալ ընդդատության խնդիր՝ Վարչական, թե Ընդհանուր իրավասության դատարաններին է ընդդատյա վեճը:
- բ.** Պետության նախաձեռնությամբ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման անհրաժեշտության դեպքում պետությունը ստիպված է սկզբում դատական կարգով միակողմանի լուծել պայմանագիրը (այս մեխանիզմը ներդրված է Օրենսգրքի 30 հոդվածի 4-րդ մասում), որպեսզի հետո նոր կարողանա ուժը կորցրած ճանաչել Թույլտվությունը, իսկ դատական քննությունն էլ կարող է տևել տարիներ:

1.2. «ՆԱԽԱԳԻԾ» ԵՎ «ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

Նախագիծն ըստ Էության հանդիսանում է գործընթացի կարևորագույն փաստաթուղթ՝ քանի, որ այն միակ փաստաթուղթն է որը/ից.

ա. պետք է մանրամասն ու ամբողջական նկարագրի արդյունահանման գործընթացը՝ ներառյալ ժամկետները, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներն ու հզորությունները, թափոնների և վտանգավոր նյութերի կառավարման ու նախատեսվող այլ գործողությունները՝ ապահովելով գործողություն, հետևանք և հետևանքի վերացման կամ մեղման գործողությունների պատճառահետևանքային կապերը:

բ. պետք է ենթարկվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պետական փորձաքննության.

գ. պետք է ներկայացվի հանրային լսումների.

դ. փոփոխությունների դեպքում կրկին պետք է ենթարկվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և պետական փորձաքննության.

ե. շեղումը Լիազոր մարմիններին հիմք է տալիս դադարացնել գործունեությունը.

զ. պատշաճ կազմվելու դեպքում հնարավորություն կտա ապահովել գործունեության ամբողջական և լիարժեք, թափանցիկ, գնահատելի, կանխատեսելի, վերահսկելի և կառավարելի գործընթաց:

Ասելով **պատշաճ** Նախագիծ հասկանում ենք Նախագիծ՝ որում լիարժեք ներառված ու մանրամասն նկարագրված կլինեն հանքարդյունահանման գործընթացի բոլոր երեք փուլերն՝ իրենց բաղադրիչներով, մասնավորապես՝

ա. Շինարարության կամ նախապատրաստական փուլ.

բ. Շահագործման փուլ.

գ. Հանքի փակման փուլ.

Վերը նշված երեք պարտադիր փուլերը (ամբողջական և մանրամասն) չներառող Նախագիծ, մասնագիտական առումով ցանկացած ՇՄԱԳ-ի և փորձաքննության արդյունքներն ի սկզբանե կլինեն ոչ պատշաճ քանի, որ այս դեպքում անհնար կլինի նախատեսվող գործունեությունը լիարժեք, ամբողջական ու պատշաճ գնահատել և

փորձաքննել, ինչպես նաև ապահովել գործունեության կանխատեսելի, վերահսկելի և կառավարելի գործընթաց:

Ի տարբերություն Նախագծի՝ Պայմանագիրն ուժնազվել է՝ դրանում ներառելով ըստ էության Թույլտվության և Նախագծի մեջ ներառվելիք պահանջներ՝ արհեստականորեն դրան վերագրելով կարևոր նշանակություն, մասնավորապես.

ա. Թույլտվության նյութ.

- տրամադրվող ընդերքի տեղամասի կոորդինատները.
- այն օգտակար հանածոների տեսակները, որոնց արդյունահանումը թույլ է տրվում ընդերքօգտագործողին:

բ. Նախագծի նյութ.

- օգտակար հանածոների արդյունահանման և հումքի վերամշակման աշխատանքների ենթադրվող ժամկետները՝ ըստ փուլերի.
- զուգահեռաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու դեպքում՝ դրանց կատարման ժամանակացույցը (այս կետն առանձին քննարկման առարկա է նաև ուսումնասիրության իրականացման մեխանիզմների և կոռուպցիոն ռիսկերի տեսնկյուններից).
- բնապահպանական կառավարման պլանը,
- հանքավայրի հաստատված պաշարների մասին տեղեկություններ,
- հանքի փակման հետ կապված դրույթները:

Արդյունքում ունենք իրավական մակարդակով արժեզրկված Նախագիծ և ուժնազված Պայմանագիր:

1.3. «ԼԵՌՆԱՀԱՏԿԱՑՄԱՆ ԱԿՏ»

1.3.1. Իրավունքի տրամադրման տեսակետից

Լեռնահատկացման ակտի հասկացությունը սահմանված է դեռ խորհրդային տարիներից՝ երբ նաև հողերն էին հանդիսանում պետական սեփականություն: Այդ ժամանակաշրջանում Լեռնահատկացման ակտով տրամադրվել է անմիջապես արդյունահանվող ընդերքի տեղամասը և արդյունահանման համար անհրաժեշտ՝ հողերի օգտագործման իրավունքը:

Այսօր անմիջապես արդյունահանման համար ընդերքի տեղամասը, ծայրակետային կոորդինատներով՝ ըստ խորության, տրամադրվում է Թույլտվությամբ իսկ հողերի հետ կապված իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են դրանց սեփականատերերի հետ կնքվող պայմանագրերով:

Արդյունքում անհասկանալի է Լեռնահատկացման ակտ տրամադրելու իմաստն ու անհրաժեշտությունը և կարելի է պնդել, որ այն իրավունքի տրամադրման իմաստով ունի գրոյական արժեք:

1.3.2. Կոռուպցիոն ռիսկերի տեսակետից

Լեռնահատկացման ակտն ընդերքօգտագործման իրավունքի բաղկացուցիչ մաս սահմանվելով՝ դրանում ամրագրված տարածքի տակ գտնվող ընդերքը (ներառյալ օգտակար հանածոները) ավտոմատ ծանրաբեռնվում են ընդերքօգտագործման իրավունքով և փաստացի հանվում շրջանառությունից՝ հօգուտ տվյալ ընդերքօգտագործողի:

Ավելորդ չեմ համարում նշել, որ այս դեպքում, առանց որևէ տրամաբանական հիմքի, պետությունը զրկվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքներն իրականացնելու հնարավորությունից:

Համաձայն սահմանված նորմի հանքարդյունահանողը լեռնահատկացման սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք:

Այստեղ եթե գործունեություն ասելով հասկանում ենք ընդերքօգտագործումը՝ նման նորմի սահմանումն առնվազն անիմաստ ու անտրամաբանական է քանի, որ ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնված ընդերքի տեղամասն արդեն իսկ չի կարող ծանրաբեռնվել ընդերքօգտագործման այլ իրավունքով, իսկ եթե նկատի ունենք ցանկացած այլ գործունեությունը՝ նորմը հակասում է առողջ

տրամաբանությանը, այլ իրավական նորմերին և խախտում բազմաթիվ անձանց իրավունքները:

Այնուամենայնիվ նման նորմի սահմանմամբ, շեշտադրվում է Լեոնահատկացման ակտով <<բացառիկ իրավունք>> տալու ձևական հանգամանքը՝ արհեստականորեն կարևորելով և բարձրացնելով դրա <<կշիռն ու արժեքը>>:

Համաձայն սահմանված նորմի հանքարդյունահանողն իրավունք ունի լեոնահատկացման ակտով որոշված ընդերքի տեղամասի սահմաններում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություն՝ տեղյակ պահելով լիազոր մարմնին:

Այս նորմն Օրենսգրքի տրամաբանությանը հակասող և ամբողջությամբ կոռուպցիոն ենթատեքստ ունեցող նորմ է քանի, որ.

ա. Օրենսգրքի տրամաբանությամբ և փաստացի՝ լեոնահատկացման ակտով չի տրամադրվում ընդերքի տեղամաս՝ ըստ խորության, այլ <<տրամադրվում է>> ընդամենը օգտակար հանածոյի արդյունահանման և վերամշակման նպատակով կառուցվելիք շենքի, շինության, տեղակայված սարքավորումների, հաղորդակցության ուղիների կամ այլ ենթակառուցվածքների ամբողջության տեղադրման համար անհրաժեշտ տարածքների եզրակետերի կոորդինատներ:

բ. Հանքարդյունահանողին հնարավորություն է տալիս Լեոնահատկացման ակտում նշված կոորդինատներով սահմանած տարածքի տակ գտնվող ընդերքի տեղամասերում իրականացնել երկրաբանական ուսումնասիրություն՝ ընդամենը տեղյակ պահելով լիազոր մարմնին:

Այստեղ առաջանում է լուրջ հակասություն Օրենսգրքով սահմանված կարգով ուսումնասիրության իրավունքի ձևավորման գործընթացի ընդհանուր տրամաբանության հետ:

Արդյունքում ստացվում է, որ հանքարդյունահանողը շահագրգիռ է լեոնահատկացման ակտով ստանալ հնարավորինս մեծ տարածք որովհետև օգտագործելով նշված նորմը կարող է նշված ամբողջ տարածքում իրականացնել ուսումնասիրություն ընդամենը տեղեկացնելով՝ առանց ուսումնասիրության ծրագրի:

Հատկանշական և ուշադրության արժանի են համարում նաև այն, որ Լեոնահատկացման ակտով հիմնականում տրամադրվել են Թույլտվությամբ տրամադրված ընդերքի տեղամասերից բավականին մեծ տարածքներ:

Հաշվի առնելով վերը նշվածը կարելի է պնդել, որ Լեոնահատկացման ակտը հանդիսանում է նաև լրջագույն կոռուպցիոն ռիսկեր պարունակող փաստաթուղթ:

1.4. «ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ»

Վերը նշված խնդիրները լուծելու նպատակով գտնում ենք, որ ընդերքօգտագործման իրավունքը (բացառությամբ ոչ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ուսումնասիրության) պետք է դարձվի միանշանակ վարչական ակտ՝ հետևյալ մեխանիզմով.

ա. Ապահովել պատշաճ՝ լիարժեք և ամբողջական Նախագծի առկայություն.

բ. Պայմանագրում ամրագրվող իրական՝ պայմանագրային պարտավորությունները (օրինակ՝ դրույթներ ընդերքն օգտագործելիս կատարվող վճարի հաշվարկման և վճարման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ և այլն) ամրագրել որպես Թույլտվության՝ պարտադիր կատարման ենթակա պայմաններ, որոնք կարող են փոփոխվել Նախագծում՝ դրանց հետ առնչվող փոփոխություններ կատարվելու դեպքում:

Արդյունքում կունենանք պարտադիր կատարման ենթակա պայմաններ պարունակող Թույլտվությամբ և պատշաճ՝ լիարժեք և ամբողջական Նախագծով հավաստվող հանքարդյունահանման իրավունք:

2. «ԿՈՆՍԵՐՎԱՑՈՒՄ» ԵՎ «ՍԱՌԵՑՈՒՄ»

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում հանքավայրի կոնսերվացում տերմինն օգտագործվում է երկու տեղ՝ չտալով որևէ բացատրություն կոնսերվացման էության և մեխանիզմների վերաբերյալ:

Օրենսգրքում առկա է նաև լեռնային փորվածքների և կառույցների սառեցում տերմինը, որի էության և մեխանիզմների վերաբերյալ կարգավորումները սահմանված են ՀՀ կառավարության որոշմամբ: Նշված որոշմամբ սահմանված նորմերը մեր կարծիքով թերի են և առաջացնում են հիմնավոր հարցադրումներ, սակայն ի տարբերություն հանքավայրերի կոնսերվացման տալիս են սառեցման որոշակի իրավակարգավորումներ:

Որպես խնդրի լուծում առաջարկում ենք Օրենսգրքից հանել հանքավայրերի կոնսերվացում տերմինը՝ հստակեցնելով լեռնային փորվածքների և կառույցների սառեցման իրավակարգավորումները:

ԵՁՐԱՅԱԼԳՈՒՄ

«Պայմանագիրը» չի հանվել ոչ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքի բաղադրիչների ցանկից:

Ոչ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության (ռեգիոնալ երկրաբանական, հրաբխային գործունեության, միներալոգիական, հնէաբանական և երկրաբանական հավաքածուների ստեղծում և գիտական, մշակութային, գեղագիտական ու այլ նշանակություն ունեցող երկրաբանական օբյեկտների նկարագրում ու պահպանում) իրավունքից որպես բաղադրիչ Պայմանագիրը չենք հանել որովհետև կարծում ենք կարող են լինել դեպքեր երբ պետական կազմակերպությունները (գիտական ինստիտուտներ և այլն) կարող են իրականացնել նման ուսումնասիրություններ և այս դեպքում միայն վարչարարության մեխանիզմը թողնելը պրակտիկայում կարող է առաջացնել խնդիրներ:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սույն զեկույցը արտադրվել է ՀՕԲԿ անձնակազմի կողմից, որը ներառում է հրապարակման թվականի դրությամբ կազմակերպության մեջ ներգրավված մասնագետների աշխատանքները:

Սույն աշխատությունից ամբողջական կամ մասամբ օգտվելու կամ ներկայացնելու դեպքում՝ զեկույցին պատշաճ հղում տալը պարտադիր է: